

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/2

19 հունիսի 2012թ.

Քննարկվեց քաղաքացի Սարգիս Մարտիրոսյանի 12.06.2012թ. դիմում-բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 25.05.2012թ. հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410587 վարչական ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ աշխատակիցների կողմից 25.05.2012թ-ին կազմվել է թիվ 1410587 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է, որ վերջին վեց ամիսների ընթացքում Սարգիս Մարտիրոսյանն իր անձնական օգտագործման <ԳԱԶ 24> մակնիշի 27LS133 պետհամարանիշի մարդատար ավտոմեքենայով զբաղվել է տաքսի ծառայություն գործունեությամբ, չունենալով համապատասխան պետական գրանցում և լիցենզիա: Փաստի վերաբերյալ Սարգիս Մարտիրոսյանն իր կողմից տրված հայտարարության մեջ նշել է, որ իրականում զբաղվել է ապօրինի տաքսի ծառայություն գործունեությամբ և, որ այդ գործունեության վեց ամիսների ընթացքում համախառն եկամուտը կազմել է 5000 դրամ: Այսպիսով, Սարգիս Մարտիրոսյանը թույլ է տվել <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 26-րդ բաժնի պետը 25.05.2012թ-ին ընդունել է թիվ 1410587 վարչական ակտը (այսուհետ նաև վարչական ակտ), որով կիրառվել են <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի և <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված պատասխանատվության միջոցները՝ գումարով 260.000 դրամ: Իրացման շրջանառությունը հաշվարկվել է համաձայն <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի դրույթների և ՀՀ կառավարության 18.09.98թ. թիվ 580 որոշմամբ սահմանված կարգով: Հաշվի առնելով, որ Սարգիս Մարտիրոսյանի գործունեությունը օրենքով ենթակա է լիցենզավորման, առաջադրվել է նաև օրենքով սահմանված պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում՝ գումարով 25.000 դրամ:

Քաղաքացի Սարգիս Մարտիրոսյանի գանգատում նշված է, որ բողոքարկում է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 26-րդ բաժնի կողմից կազմված թիվ 1410587 վարչական ակտը, համաձայն չէ դրանում արտացոլված տեղեկությունների հետ և խնդրում է այն անվավեր ճանաչել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով քաղաքացի Սարգիս Մարտիրոսյանի և վերոգրյալ արձանագրությունը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.01.2012թ. թիվ 22-Ա հրամանով հաստատվել է <Հարկային մարմնի օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում օրենքով նախատեսված պատասխանատվության կիրառման և հարկային պարտավորությունների առաջադրման ընթացակարգը> (այսուհետ Ընթացակարգ):

Ընթացակարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, արձանագրության նկարագրական մասում պարտադիր նշվում է գործունեության տեսակը, գործունեության իրականացման հասցեն (հասցեները), չհասցեավորված վայրում գործունեության իրականացման դեպքում տեղանքի նկարագիրը:

Քննարկվող դեպքում Սարգիս Մարտիրոսյանի կողմից գործունեությունն ըստ էության իրականացվել է չհասցեավորված վայրում, սակայն ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 25.05.2012թ-ի թիվ 1410587 արձանագրությունում տեղանքի նկարագրի վերաբերյալ որևէ գրառում կատարված չէ:

Ընթացակարգի 11-րդ կետի համաձայն. <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան

հարուցված վարչական վարույթ իրականացնող պաշտոնատար անձը՝ ՕՀՎ պետը, ՕՀՎ պետի հանձնարարությամբ պետի տեղակալը կամ ՕՀՎ բաժնի պետը (այսուհետ՝ պաշտոնատար անձ) վարչական վարույթի հարուցմանը (սույն ընթացակարգով նախատեսված արձանագրության կազմմանը) հաջորդող երեք օրվա ընթացքում սույն հրամանի N6 հավելվածով հաստատված օրինակելի ձևով պատշաճ ծանուցում է (կցելով արձանագրությունը) վարչական ակտի հասցեատիրոջը և իրավախախտման փաստի արձանագրմանն առնչվող անձանց (փոխադրող, վարորդ, առաքիչ և այլ) լսումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին>:

Ընթացակարգի 13-րդ համաձայն. <Վարույթի ընթացքում՝

1) վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին լսումների միջոցով հնարավորություն է տրվում արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ,

2) վարույթի մասնակիցներին օրենքով սահմանված կարգով հնարավորություն է տրվում հարկային մարմնում ծանոթանալու վարույթի նյութերին,

3) վարույթում որպես ապացույց գնահատվում են գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք պիտանի և անհրաժեշտ է համարվում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար,

4) հնարավորություն է տրվում ծանոթանալ պատասխանատվության և հարկային պարտավորությունների հաշվարկներին ու առաջադրման եղանակներին>:

Քննարկվող դեպքում թե ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ թիվ 1410587 արձանագրությունը, թե վարչական ակտը կազմվել են նույն օրը՝ 25.05.2012թ-ին, իսկ Սարգիս Մարտիրոսյանին լսումների անցկացման տեղի, օրվա, ժամի մասին ծանուցելու վերաբերյալ որևէ ապացույց գործում առկա չէ: Այսինքն, Սարգիս Մարտիրոսյանին հնարավորություն չի տրվել օգտվելու Ընթացակարգի 13-րդ կետով սահմանված իրավունքներից:

Վերոգրյալից հետևում է, որ խախտվել են <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջները, այն է՝ Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Ընթացակարգի 17-րդ կետի համաձայն. <Վարչական ակտի՝

1) խախտման նկարագրական մասում ձևակերպվում են վարչական վարույթի հարուցման հիմքը, հղումը իրավական ակտի նորմերին, խախտման նկարագրությունը, գործի փաստական հանգամանքներն ու գնահատված ապացույցները, հղումներով իրավական ակտերի այն նորմերին, որոնք խախտվել են,

2) ակտի պատճառաբանական մասում նշվում է ակտի ընդունման իրավական հիմքերը, հղումները հարկային պարտավորություն և պատասխանատվություն սահմանող իրավական ակտերի նորմերին, արտացոլվում է վճարման ենթակա ընդհանուր գումարը, որի հաշվարկը, որպես ներդիր, կազմում է վարչական ակտի անբաժանելի մասը (ինչի մասին նշում է կատարվում վարչական ակտում)>:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին կետի <ա> ենթակետի համաձայն, վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական եւ իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

Վարչական ակտի ուսումնասիրությամբ պարզվեց, որ այն կազմվել է հիշատակված իրավանորմի և Ընթացակարգի 17-րդ կետով նախատեսված պահանջների խախտմամբ: Մասնավորապես, վարչական ակտի խախտման նկարագրական մասում, ձևակերպված չէ վարչական վարույթի հարուցման հիմքը, նշված չեն իրավական ակտերի այն նորմերը, որոնք խախտվել են: Վարչական ակտում արտացոլված չէ ակտի ընդունման իրավական հիմքերը, վճարման ենթակա ընդհանուր գումարը:

Վերոգրյալից հետևում է, որ սույն վարչական վարույթը իրականացվել է, ինչպես նաև վարչական վարույթի ընթացքում համապատասխան փաստաթղթերը կազմվել են <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 37-րդ, 55-րդ հոդվածների, ինչպես նաև Ընթացակարգի 9-րդ, 11-րդ, 13-րդ և 17-րդ կետերի պահանջների խախտմամբ:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 25.05.2012թ. հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410587 վարչական ակտը:

Հանձնաժողովի նախագահի
Ժամանակավոր պաշտոնակատար՝



Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ